Բաբկեն Հ. Հարությունյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՆ ՈՒՆԵՑԵԼ Է «ՉՈՐԲՈՐԴ ԳԻՐՔ»*

Հանճարեղ Մովսես Խորենացին անմահացել է՝ սերունդների դատին հանձնելով իր «Պատմութիւն Հայոց»-ը, որը մեզ հասած ձեռագրերում հայտնի է երեք գրքերով և ավարտվում է հեղինակի անկրկնելի «Ողբ»-ով[1]:

Մովսես Խորենացու և առհասարակ հայ պատմագրության գլուխգործոցը ստեղծվել է V դարի 70-80-ական թվականներին՝ Բագրատունյաց իշխան Սահակի պատվերով ու մեկենասությամբ[2]: Մեզ հասած տարբերակի առաջին գիրքը խորագրված է «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց», երկրորդը՝ «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց» և երրորդը՝ «Ավարտաբանութիւն մերոց հայրենեաց»: Մասնավորապես, երրորդ գրքի վերջավորությունը կարծես թե կասկած չի թողնում, որ երկասիրությունն ավարտված է հենց այդ գրքով: Եվ, վերջապես, նշանավոր «Ողբ»-ը կարծես թե ամբողջական և ավարտուն տեսք է հաղորդում երկասիրությանը: Ուսումնասիրողը կամա թե ակամա գալիս է այն եզրակացության, որ Պատմահոր համար պատմությունը մի տեսակ՝ վերջանում է Մեծ Հայքի թագավորության անկումով և իր սիրելի ուսուցիչներ Մեսրոպ Մաշտոցի ու կաթողիկոս Սահակ Պարթևի մահով:

Հայտնի է, որ մեծ հայրենասեր Մովսես Խորենացին կենդանի է եղել VI դարի սկզբներին, ուստի պետք է բավարարվել այն եզրակացությամբ, թե հայոց պետականությունից հետո նրա համար այլևս պատմություն չկար: Քանզի անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս է նա արձագանքել V դարի հայ ազատագրական պատերազմների նման կարևոր պատմական իրադարձություններին:

Հարցը թերևս կարելի էր առկախ թողնել, սակայն Թովմա Արծրունու երկու հաղորդումները մեզ ստիպում են բոլորովին այլ հայացքով նայել սույն խնդրին: Իր «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատության հենց սկզբում Թովմա Արծրունին գրում է. «Դարձեալ քանզի Մեստրիմ ի Քամայ ըստ բաժանման ազգին և աշխարհին, շինէ զԵգիպտոս և անդ հարստանան ազգապետաբար, և առանձին թագաւորեն Ասորեստանեայքն՝ ի կանոնի անդ գտցես զՆինոս և զՇա-

*Խմբագրությունը պատրաստ է տպագրելու նաև այլ ուսումնասիրողների կարծիքները՝ այս վիճահարույց հարցի վերաբերյալ: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 20.09.2012:

1 Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ **Մ. Աբեղյան և Ս. Յարութիւնեան,** Տփղիս, 1913:

2 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ, հատ. Բ, եր., 1984, էջ 455:

միրամ և զԱբրահամ և զվեշտասաներորդ հարստութիւն Եգիպտացւոց, և ի չորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկառնացւոյ, որպէս և ի չորրորդ դպրութեանն Մովսէսի»[3]: Ստացվում է, որ Պատմահոր երկասիրությունն ունեցել է «Չորրորդ գիրք», որը, սակայն, հակառակ սպասվածին՝ ներկայացրել է վաղ ժամանակների պատմությունը, ինչն, այնուամենայնիվ, հեղինակը կատարել է իր աշխատության առաջին գրքում:

Արծրունյաց պատմիչը Պատմահոր «Չորրորդ դրվագի» կամ գրքի մասին հայտնում է նաև իր աշխատության մեջ՝ մեկ այլ կապակցությամբ. «Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեալ մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց մեծաց, հրաշազան յօրինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն. որոյ ժամանակ կենացն տեսեալ ձգեալ ամս ՃԻ լի և պարարտ ծերութեամբ որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին, զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովպայ՝ յիւրումն ստուգաբանեալ պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ: Ուստի և մեք ըստ կարի մերում անցեալ գտաք զհամառօտութիւն զրուցատրութեանս, զոր շարագրեալ յայտարարութեամբ յանդիման, կացուցեն քեզ, քա՛ջդ բանասիրաց, Գագիկ Վասպուրական և մեծ զօրավար Հայոց, …»[4]:

Ով էլ որ անդրադառնա հիշյալ հաղորդումներին, հայտնվում է ոչ թե դժվարին, այլ գրեթե անելանելի կացության մեջ: Եթե առաջին հաղորդման մեջ խոսքը, անտարակույս, վերաբերում է վաղնջական ժամանակներին, ապա այստեղ պարզ հասկացվում է, որ պատմությունը Պատմահոր կողմից հասցված է մինչև Զենոն (474-491) կայսեր ժամանակները, ինչը բոլոր տեսակետներից միանգամայն տրամաբանական է:

Արդ, ինչպե՞ս վերաբերվել այս երկու հատվածներին: Մեր կարծիքով, գոնե, առաջին հաղորդումը որևէ կապ չունի «Չորրորդ գրքի» հետ: Ուշադրություն է գրավում մեկ այլ հանգամանք ևս, որ, կարևոր է քննության համար: Եթե առաջին հաղորդման մեջ խոսքը վերաբերում է «Չորրորդ դպրութեանը», ապա երկրորդ հաղորդման մեջ տեղեկություն է հաղորդվում Պատմահոր «Չորրորդ դրուագ»-ի մասին: Անշուշտ, ընթերցողը կարող է առարկել, թե ինչ տարբերություն, քանի որ Արծրունյաց պատմիչի երկասիրության գրքերը նույնպես անվանվում են դպրություններ: Կարելի է, թերևս, կարծել, որ թեկուզ Թովման դպրություն է անվանել իր աշխատության գրքերը, սակայն տվյալ դեպքում դպրության տակ հասկացել է գլուխ:

Այս դեպքում «Չորրորդ դպրության» տակ կարելի է հասկանալ Պատմահոր երկասիրության Ա գրքի Դ գլուխը: Կարծես թե հարցը փակված է, միայն թե Թովման խոսում է Մեստրիմի, Երուսաղեմի, Ասորեստանի, Նինոսի, Շամիրամի, Աբրահամի և Եգիպտոսի 16-րդ հարստության մասին, իսկ Պատմահոր Ա գրքի Դ գլխում առավելապես՝ Ադամի և նրա հաջորդների, ինչպես նաև Նոյի մասին է: Մտածել, թե Պատմահոր երկի գլուխները բաժանված են եղել դպրությունների, հազիվ թե իմաստ ունի: Ըստ որում, «չորրորդը» կասկածի տակ առնելը նույնպես

3 «Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց», բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմանությամբ և ծանոթագրություններով Վ. Ս. Վարդանյան, Եր., 1985, դպր. Ա, գլ Ա, էջ 18:

4 Անդ., դպր. Ա, գլ. ԺԱ, էջ 122:

անտրամաբանական է, քանի որ գրված է տառերով: Անշուշտ, բացատրության կարոտ խնդիրներ կան, սակայն, այնուամենայնիվ, որոշակիորեն hակված ենք կարծելու, որ «Չորրորդ դպրության» տակ Արծրունյաց պատմիչը նկատի է ունեցել Մովսես Խորենացու երկասիրության Ա գրքի Դ գլուխը: Դրան իր նպաստն է բերել այն իրողությունը, որ խոսելով Պատմահոր կողմից մինչև Զենոն կայսեր ժամանակների պատմությունը գրելու մասին, Թովման օգտագործում է ոչ թե «Դպրութիւն», այլ «Դրուագ» արտահայտությունը: Այլ խոսքով` նա ինչ-ինչ տարբերություն է տեսել այդ երկու բառերի իմաստների միջև: Ուստի ընթերցողի համար կարծես թե պարզ է դառնում, որ մեր քննությունը տանում է դեպի Պատմահոր երկասիրության «Չորրորդ գրքի» գոյության հավանականությունը:

Մովսես Խորենացու հանճարեղ աշխատության մեջ չորրորդ գրքի գոյության խնդիրն այնքան կարևորություն է ներկայացնում հայագիտության համար, որ ժամանակին իր վրա է հրավիրել հայ բազմավաստակ երախտավորներից մեկի` Ղևոնդ Ալիշանի ուշադրությունը: Նա «Յաղագս Մովսիսի Խորենացւոյ Դ անուանեալ գրոյն Պատմութեան» հոդվածով[5] հանդես եկավ 1851 թվին, որով մի տեսակ հիմք դրվեց Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի չորրորդ դրվագի որոնումներին[6]: Ղևոնդ Ալիշանն այնքան վստահ էր Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Դ գրքի գոյության մեջ, որ դրա հայտնաբերումը համարում էր «բազմատենչալի գիւտ»:

Ղ. Ալիշանը գտնում էր, որ Ստեփանոս Ասողիկն ու Սամվել Անեցին աչքի առաջ ունեցել են Պատմահոր երկասիրության «Չորրորդ գիրքը» կամ դրվագը: Դժվարանում ենք պնդել, թե Ասողիկը ծանոթ է եղել Պատմահոր պատմության Դ գրքին[7]: Սակայն Սամվել Անեցու մոտ հստակ արձանագրված է. «Աստանօր աւարտումն Պատմութեան Հայոց գրելոյն Մովսիսի»[8]: Մի կողմից` Սամվել Անեցին կարծես հաստատում է իր հաղորդմամբ «Դ գրքի» գոյությունը, սակայն առաջ է բերում նաև որոշ հարցեր: Իսկ ինչո՞ւ Պատմահոր պատմությունը չի հասնում Զենոն կայսեր ժամանակները և, եթե հավատանք հեղինակին, այն ավարտվում է 485 թվականով: Մի կողմից` այս թվականը կարծես թե հարմարվում է 481/482-484 թթ. պատմության ժամանակներին, սակայն չմոռանանք, որ Սամվելի Ժամանակագրությունը բավականին վառ արտահայտված խոցելի կողմեր ունի: Խնդիրն այն է, որ հեղինակը հիշում է Պարսից արքայից արքա Հազկերտ Բ-ին, թե իբր` վերջինս իշխել է 466-485 թթ., այն դեպքում, երբ նրա գահակալության շրջանը 439-457 թվականն է:

Ղ. Ալիշանը ուշադրություն է դարձրել նաև մի հետաքրքիր իրողության վրա. առաջին գիրքը կրում է «Ծննդաբանութիւն Հայոց մեծաց», երկրորդը` «Միջակ պատմութիւն Հայոց մեծաց» և երրորդը` «Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց»: Ըստ որում, եզրակացությունը հետևյալն է` Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքն ունեցել է «Վերադարձութիւն» խորագիրը: Ըստ Ղ. Ալիշանի, Դ գիրքը նման չի եղել նախորդ երեք գրքին, որոնք միատարր են, այլ

5 Տե՛ս «Բազմավէպ», Վենետիկ, 1851, մարտի 1, թիվ 5:

6 Տե՛ս **Արտաշես Մաթևոսյան,** Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» Չորրորդ գիրքը, Եր., 1995, էջ 7:

7 Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 7, 53, 77, 79, 80, 82: Թերևս դժվարությամբ ` նման եզրակացության կարելի է գալ էջ 79-ի հաղորդումից, որն, այնուամենայնիվ, հստակություն չունի:

8 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1892, էջ 71:

ինչ-որ այլ բան էր: Ի վերջո, Ղ. Ալիշանը հանգում է այն մտքին, որ չորրորդ գիրքը իրենից ներկայացրել է հավելվածներ: Ղ. Ալիշանը հիշյալ հոդվածով և այլ աշխատություններով սկիզբ դրեց հայագիտության մեջ Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի «Դ գրքի» գոյության վիճաբանությանը: Եվ քանի որ, բացի Թովմայի աշխատությունից հավաստող գրավոր այլ տեղեկություններ չունենք «Դ գրքի» գոյության օգտին, ապա նման տեսակետը ժխտելու համար կարծես թե ինչ-ինչ հանգամանքներ մնացին:

Մ. Էմինը հիմնականում ընդունում էր Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի «Չորրորդ գրքի» գոյությունը՝ հիմք ունենալով Արծրունյաց պատմիչի հաղորդումները և Պատմահոր խոստովանությունները[9]:

Հ. Կարենյանցը նույնպես ընդունում էր չորրորդ գրքի գոյությունը, որի կորստյան պատճառը համարում էր ողջ ազգի և հատկապես հոգևորականների թերացումը[10]:

Խորեն Ստեփանեն դեմ է դուրս գալիս Մ. Էմինի տեսակետին և ընդունում Վ. Լանգլուայի կարծիքը, ըստ որի այդ գիրքը կարող է գրած լինել Մովսես Խորենացու աշակերտներից մեկը: Խորեն Ստեփանեն առավել հավաստի է համարում Ղ. Ալիշանի կարծիքն այն առումով, որ ոչ թե նշված գիրքը պատմության շարունակություն է եղել , այլ մի քանի ծանոթագրական հատվածներ[11]: Խորենացու երկասիրությունը երկրորդ անգամ հրատարակելիս նա հայտնել է իր կարծիքի երկրորդ մասը, հավանաբար, ինչպես ենթադրում է Ա. Մաթևոսյանը՝ Գ. Տեր- Մկրտչյանի ուսումնասիրության ազդեցությամբ[12]:

Այս խնդրին հանգամանորեն անդրադարձել է Գ. Տեր-Մկրտչյանն իր «Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն»-ը աշխատության մեջ: Նա, քննության առնելով մինչև ինքն արտահայտված կարծիքները, գտնում է, որ իր նպատակը չէ ընդունել կամ հերքել «Դ գրքի» գոյությունը, քանի որ այդ հարցով զբաղվող բոլոր ուսումնասիրողներն էլ մոռացել են այն ամենադրական և ծանրակշիռ փաստը, որի գոյությամբ կարելի է կասկածանքով վերաբերվել Արծրունյաց պատմիչի հաղորդմանը: Դա այն է, որ Խորենացուց օգտված պատմիչները՝ Սեբեոսը, Հովհաննես Դրասխանակերտցին և անգամ Թովմա Արծրունին չեն հաղորդում որևէ բան, որը չգտնվեր մեզ հասած Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի մեջ: Հեղինակի եզրակացությամբ, հիշյալ «Դ գիրքը» որևէ նոր բան չէր պարունակում, այլ խոսքով՝ չկար Դ գիրք[13]: Անշուշտ, շատ դժվար է հերքել կամ մերժել մեծ հայագետի այս տեսակետը, սակայն, ինչպես նշում է Ա. Մաթևոսյանը, թե՛ Թովմայի և թե՛ վերը նշված մյուս հեղինակների մոտ նմանօրինակ հետքեր կան[14]:

Ուսումնասիրողներից Բ. Գևորգյան (Ճուղուրյան) Վաղարշապատցին «Խորենացուն Խորենացիով պետք է հասկանալ» աշխատության մեջ ունի «Խորենացին գրել է չորրորդ գիրք» վերտառությամբ գլուխ: Այլ խոսքով, նա Խորենացու խոստովանությունների հիման վրա գտնում է, որ եղել է «Չորրորդ գիրք»[15]:

Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի «Չորրորդ գրքի» խնդրին անդրադար-

---

9 Տե՛ս “История Армении Мовсеса Хоренаци”, СПб, 1858, с. 17.
10 Տե՛ս **Հ. Կարենեանց,** Բաղդատութիւն Պատմութեան Մովսէսի Խորենացւոյ, Տփղիս, 1858, էջ 3:
11 Տե՛ս **Մովսէս Խորենացի,** Հայկական պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 282-283:
12 **Մովսէս Խորենացի,** Հայոց պատմութիւն, Ս.Պետերբուրգ, 1897, Առաջաբան, էջ 497-498:
13 Տե՛ս **Գ. Տեր-Մկրտչյան,** Հայագիտական ուսումնասիրություններ, հ. Ա, Եր., 1979, էջ 44-45:
14 Տե՛ս **Ա.Մաթևոսյան,** նշվ. աշխ., էջ 12:
15 **Բ. Գևորգյան (Ճուղուրյանց),** Վաղարշապատցի, Խորենացուն Խորենացիով պետք է հասկանալ, Վաղարշապատ, 1889, էջ 19-20:

ծել է նաև Ստ. Մալխասյանցը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1940 թ. աշխարհաբար թարգմանության ներածության մեջ: Անդրադառնալով Թովմա Արծրունու արդեն բազմիցս հիշատակված հաղորդումներին, նա գրում է, թե այդ խառնաշփոթ հատվածը գտել է ապացուցողների՝ հանձինս մասնավորապես Ղ. Ալիշանի, Մ. Էմինի և եզրակացնում, որ Դ գրքի գոյությունը պետք է բացեիբաց մերժել, քանի որ ուղիղ ոչ մի հեղինակ այն չի հիշում և ոչ մի հեղինակ դրանից ոչ մի քաղվածք չի կատարում և բոլորը՝ առաջին երեք գրքերից օգտվելուց հետո դիմում են այլ հեղինակների և որ Գ գիրքն իր «Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց» խորագրով և վերջաբանի «Ողբ»-ով ապացուցում են, որ Գ գրքով էլ ավարտվում է «Հայոց պատմությունը»: Ստ. Մալխասյանցն իր եզրակացությունն ավարտում է ներքոհիշյալ խոսքերով, որ Արծրունյաց պատմիչի հիշատակած Դ գիրքը կամ պետք է համարել թյուրիմացություն կամ աղավաղում, առավել ևս, որ Թ. Արծրունին հայտնի է իբրև անհավաստի մատենագիտակ և պատմական տեղեկություններ հաղորդող հեղինակ[16]:

Հետաքրքիր է Հ. Արմենի վերաբերմունքը այս հարցի նկատմամբ: Նա իր «Խորենացիի Պատմութեան Չորրորդ գիրքը» ուսումնասիրության մեջ գրում է, որ չորրորդ գիրքը կապ չունի Ադամից մինչև Զենոն կայսեր եղած պատմությանը, որը Խորենացու Ա, Բ, Գ գրքերի մեջ է, որ Գ գիրքը փոխանակ մեր այժմյան ունեցած 440 թվականով ավարտվելու, վերջացել է 470-ական թվականներով: Հետևաբար, ըստ նրա «Չորրորդ դրվագով» Խորենացին հավելյալ տեղեկություններ է տվել իր ուսուցիչ Սահակ Պարթևի մասին: Այդ առիթով նա քննադատում է Ստ. Մալխասյանցին՝ մի քիչ ջղայնացած լինելու մեջ նման կարծիք հայտնելու համար: Շատ կարևոր նկատողություն է, որ մեզ հասած Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի մեջ չկա Տրդատի հուղարկավորության նկարագրությունը[17]:

Այս խնդրին անդրադարձել են նաև Ն. Պողոսյանը և ուրիշներ: Չորրորդ գրքի գոյության օգտին տեսակետ է արտահայտել Վ. Վարդանյանն իր հրատարակած «Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985»-ում[18]:

Վերջին անձը, որ փորձել է ամենայն պատասխանատվությամբ անդրադառնալ այս խնդրին, Արտ. Մաթևոսյանն է: Նա իր տքնաջան աշխատանքի վերջում գալիս է այն եզրակացության, որ Խորենացու «Չորրորդ գիրքը» հավելվածների մի բաժին է եղել[19]: Միանգամայն ուշադրության արժանի է հեղինակի այն միտքը, որ «չորրորդ»-ը չէր կարող լինել Գ-Դ-ի միջև շփոթի արդյունք, քանի որ գրված է տառերով: Հեղինակի կարծիքով, Պատմահոր երկասիրության չորրորդ գիրքը կոչվել է «դրուագ», իսկ վերնագիրն է եղել «Մովսէսի Խորենացւոյ Վերադարձութիւն ի վերայ երեցունց դրուագեալ հատածին»[20]: Նրա կարծիքով՝ X դարում Թովմա Արծրունին իր ձեռքի տակ ունեցել է Մովսես Խորենացու չորս գրքերը, այսինքն՝ մեզ հասած երեք գրքերը և չորրորդ գիրքը[21]: Ըստ Ա. Մաթևոսյանի՝ չորրորդ գիրքը կոչվել է նաև «Երկրորդ Պատմագրութիւն»՝ ելնելով ընդգրկված նյու-

16 Տե՛ս **Մ. Խորենացի,** Հայոց պատմություն, Եր., 1940: Տե՛ս Ներածություն, էջ 18-19:
17 Տե՛ս **Հ.Ք.Արմէն,** Պատմական քննարկումներ, Պէյրութ, 1968, էջ 70-71, 74, 78, 80, 86:
18 Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985, էջ 516:
19 Տե՛ս **Ա.Մաթևոսյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը, Եր., 1995, էջ 20-102:
20 Նույն, էջ 25:
21 Նույն :

թի բնույթից և նրա յուրօրինակ կառուցվածքից: Նա առաջին երեք գրքերը համարում է «Առաջին պատմագրութիւն»[22]: Ըստ որում՝ չորրորդ գիրքը սկսվել է Ադամով և հասել մինչև Զենոն կայսեր գահ բարձրանալը 474 թ.[23]:

Մենք այլևս չենք խորանում Ա. Մաթևոսյանի հետագա կարծիքների ու ենթադրությունների մեջ, որովհետև, ըստ մեզ, Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի չորրորդ գրքի կամ դրվագի խնդիրը կարոտ է նոր քննության ու լուսաբանության, որի արդյունքները, հնարավոր է, որ շատերի համար անակնկալ լինեն:

Սկսենք այն բանից, թե ինչ էր տեսնում Ա. Մաթևոսյանը չորրորդ կամ հավելվածային գրքում: Նրա կարծիքով, դրա մեջ մտել են վեց **Բաներ**. **Բան Ա**-Մովսէսի Խորենացւոյ և Անդրէասի [ասացեալ], **Բան Բ**-Յեկեղեցւոյ պատմութենէն, զոր Սեթի ասաց, **Բան Գ**- Սեթի ժամանակագրի [ասացեալ], **Բան Դ**-Մովսէսի Խորենացւոյ ասացեալ է երկրաչափ յաղագս աշխարհագրութեան տիեզերաց, **Բան Ե**-Եպիփանու ասացեալ, **Բան Զ**- [Մովսէսի Խորենացւոյ ասացեալ] Յաղագս մահուան Տրդատայ թագաւորի հզաւրի, քաջի և առաքինոյ[24]: Հեղինակի կարծիքով, դժվար չէ տեսնել, որ ներկայացված մատենագրական միավորները հիմնականում օտար աղբյուրներ են, որոնք Խորենացին օգտագործել է «Հայոց պատմության» երեք գրքերը շարադրելիս և ապա՝ անհրաժեշտ է գտել պետքական համարվածները որպես հավելված բերել «Վերադարձութեան» մեջ: Որ իբր՝ դրանով նա հարստացնում է «Հայոց պատմության» երեք գրքերը և մյուս կողմից՝ ընթերցողին փաստերի հավաստիության մեջ համոզվելու հնարավորություն է տալիս[25]:

Անկեղծ ասած, տեսակետն այնքան տրամաբանորեն է մատուցվում, որ առաջին հայացքից պետք է այն ընդունել և վերջ: Սակայն միաժամանակ հարց է ծագում, իսկ որտե՞ղ է մինչև Զենոն կայսրն ընկած պատմությունը: Վերջին հաշվով, Թովմա Արծրունին բոլորովին էլ միամիտ չէր, որ Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ը կարդալուց հետո որոշակիորեն նշեր այն մասին, թե Մովսես Խորենացին իր պատմությունը հասցրել է մինչև Զենոն կայսեր ժամանակները:

Հարկ է խոստովանել, որ պատմությունը որոշակի բնագավառ է, և այստեղ հարցը բարձրացնել «Հավելվածների» խնդիր առաջ բերելով, բոլորովին կարիք չկա: Փորձենք հիշել, թե ո՞ր հեղինակն է այդպես վարվել: Դժբախտաբար, ստիպված ենք խոստովանել, որ այդպիսի հեղինակ հայ մատենագրության մեջ չկա:

Մենք կամենում ենք Մովսես Խորենացուն տեսնել որպես անթերի մարդ, որը խոսք է տալիս և այնուհետև դրանք կատարում է: «Պատմութիւն Հայոց»-ի մեզ հասած օրինակը ցույց է տալիս, որ Հայոց պատմությունը հապշտապ գրելիս, քանի որ ժամանակ չկար, նա երբեմն հիշում է ինչ-ինչ դեպքերի և իրադարձությունների մասին, որոնք մոռացել է իր տեղում արձանագրել[26]: Այնպես որ պետք է համաձայնել, որ Պատմահայրը ավելի շատ բան խոստանում է, քան կարող է կատարել: Հիշյալ բոլոր բաները կամ առեղծվածները կարող են դիտարկվել որպես առանձին աշխատություններ, բայց ոչ որպես պատմություն, ուստի եթե նա

22 Անդ, էջ 26:
23 Անդ :
24 Տե՛ս **Ա.Մաթևոսյան,** նշվ. աշխ., էջ 100-101:
25 Անդ, էջ 101:
26 **Մովսես Խորենացի,** գիրք Բ, գլ Ը.«Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիսոյ կողմանս կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս գիտեա՛ զի զցեղս զայս մեծ և. անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենիս յիշատակել. ...»:

այդպիսի աշխատություններ գրել է, իսկ բոլոր հիմքերը կան եզրակացնելու, որ դրանք եղել են, ապա դրանք բոլորովին էլ «Չորրորդ դրվագ»-ի մեջ չեն մտել, այլ համարվել են առանձին ստեղծագործություններ: Ուստի մի կողմից՝ մենք չենք կարող համաձայնել այն մտքի հետ, թե չորրորդ գիրքը բաղկացած է եղել հավելվածներից, իսկ մյուս կողմից՝ կարծես թե մեր ձեռքի տակ ոչինչ չկա, որը որոշակիորեն ցույց կտար, թե այն վերցված է Պատմահոր Դ գրքից:

Այդ պատճառով սկսենք այն բանից, թե ինչպես են խորագրված առաջին երեք գրքերը Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի մեզ հասած օրինակում: Վերցնում ենք Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Տփղիսի 1913 թ. հրատարակությունը և կարդում «Գիրք առաջին-Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց», որը, սակայն, Ա գրքի գլուխների ցանկում բացակայում է: Երկրորդ կամ Բ գիրքը խորագրված է «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց»: Երրորդ գիրքը կամ ըստ հեղինակի՝ «Հատած երրորդ»-ն ունի «Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց» վերնագիրը[27]: Գրքերի խորագրերը, սակայն, հարցեր են ծնում, թե ինչու Ա գիրքը «Ծննդաբանութիւնն» է Հայոց մեծերի, Բ գիրքը՝ Միջակ պատմությունը մեր նախնիների կամ Հայոց [մեծերի], իսկ Գ գիրքը կոչվում է «Ավարտաբանութիւն մերոց հայրենեաց»: Ամենայն հավանականությամբ Գ գիրքը պետք է խորագրվեր «Աւարտումն կամ աւարտաբանութիւն Հայոց մեծաց», բայց հանդես է գալիս միանգամայն անընկալելի խորագրով: Հարցիս լուծման բանալին տալիս է Մովսես Խորենացու այդ հիրավի հանճարեղ երկասիրությունը: Երբ մենք բացում ենք Բ և Գ գրքերի գլուխների ցանկը, ապա տեսնում ենք, որ Բ գրքի Ա գլուխն սկսվում է «Միջակ Պատմութիւն Հայոց» (թերևս սկզբնապես «Հայոց մեծաց»), իսկ Գ գրքի Ա գլուխն սկսվում է «Աւարտումն պատմութեան Հայոց մեծաց» խորագրով: **Կարծում ենք, որ առանձնապես մեծ խորաթափանցություն և տրամաբանություն չի պահանջվում հասկանալու համար, որ իրականում Բ և Գ գրքերի վերնագրերը սրանք են, որոնք Խորենացու երկը խմբագրելիս վերածվել են հիշյալ գրքերի Ա գլուխների խորագրերի, իսկ Դ կամ չորրորդ գրքի վերնագիրը՝ «Աւարտաբանութիւն մերոց հայրենյաց»-ը տեղափոխել են Գ գրքի վրա:**

Դ գիրքը կա և ամեն ինչ խոսում է դրա գոյության օգտին: Մեջտեղ է գալիս մյուս հարցը. իսկ ինչպիսին է եղել Դ գրքի բովանդակությունը: Մեր կարծիքով, Մովսես Խորենացու պես հայրենասեր անձնավորությունը չէր կարող չանդրադառնալ V դարի այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք էին ժողովրդաազատագրական պատերազմները: Այլ խնդիր է, բնականաբար, թե նա ինչպես է ընկալել դրանք և ինչպես է արժևորել ու մատուցել: Այնուհետև՝ Թովմա Արծրունին այնքան հստակ է գրում Պատմահոր կողմից Հայոց պատմությունը մինչև Զենոն կայսեր իշխանությունը գրելը, որ ոչ մի կասկած չի մնում, որ Մովսես Խորենացին գրել է նաև V դարի ազատագրական պատերազմների պատմությունը: Այլ խնդիր է, իհարկե, թե ինչպես հասկանալ «մինչ ի կայսր Զենոն» արտահայտությունը: Այն հնարավոր է մեկնաբանել երկու կերպ. մինչև Զենոն կայսրն ընկած շրջանը, բայց և Զենոն կայսեր (474-491) իշխանության ամբողջ շրջանը կամ, որ ավելի հավանական է՝ վերջինիս իշխանության մեծ մասը: Զենոն կայսրը բավական երկար իշխեց՝ 17 տարի, ուստի մենք անվերապահորեն գտնում ենք, որ Պատմահայրն իր երկասիրության Դ գրքում կամ դրվագում ընդգրկել է Զենոնի կայսերական իշխանության գոնե մինչև 484 թվականն ընկած ժամանակաշրջանը: Իսկ

27 Անդ. գիրք Ա, էջ 5, գիրք Բ,էջ 101, գիրք Գ, էջ 257:

այդ ժամանակաշրջանում էլ տեղի են ունեցել V դարի երկու նշանավոր ժողովրդաազատագրական պատերազմները:

Այսօր հայագիտության մեջ գրեթե համընդհանուր է դարձել այն տեսակետը, թե Վարդանանց պատերազմը նվիրված է եղել քրիստոնեական հավատի պաշտպանությանը, և որ հայ նախարարաները, այդ թվում, իհարկե, Վարդան Մամիկոնյանը, ինչպես նաև ողջ ապստամբ ժողովուրդը նահատակներ են եղել հանուն Հայոց եկեղեցու քրիստոնեական հավատի: Ավելորդ է ասել, որ նման մոտեցումը հեռու է պատմական իրականությունից, քանի որ սոսկ նահատակության գնացող Վարդան Մամիկոնյանը բոլորովին էլ չէր հավաքի 66 հազար մարտիկներ, թե՝ ինքը գնում է նահատակվելու: Փորձենք մի պահ մեզ պատկերացնել նահատակության պատրաստվող Վարդան Մամիկոնյանի դերում: Լավագույն դեպքում նա կաշխատեր իր մտերիմներին համոզել, որ նրանք էլ միանան իրեն և ոչ թե մեծամեծ դժվարություններով կհավաքեր 66 հազար մարտիկների, նրանց մի մասին մարտադաշտ կբերեր բռնությամբ, որոնք, օգտվելով հարմար պահից, կլքեին մարտադաշտը: Պատահական չէ, որ Ղազար Փարպեցին այդ կապակցությամբ հետևյալն է գրել. «Իսկ այլ բազմութիւն զօրացն Հայոց, որք առ հարկի և ոչ կամաւ, մանաւանդ զի և զայլս յերկուանալոյ և դարձուցանելոյ յետս, որք երկնից բարութեանց ցանկացեալք էին՝ անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին զյաւիտենից կորուստն»[28]: Դժվար չէ տեսնել, որ ապստամբների և առաջին հերթին՝ Վարդան Մամիկոնյանի նպատակը եղել է հայոց պետականության վերականգնումը և Ավարայրի ճակատամարտում այն պաշտպանելը, ինչը, կարծում ենք, այսօր տարակուսանքներ ծնել չի կարող: Ավելին՝ մարդկանց հարկադրելով մարտադաշտ դուրս բերելն արդեն հավաստում է պարսկական իշխանության առկայության մասին:

Մեզ համար այսօր դժվար է պնդել նաև, որ Եղիշեի և Ղազար Փարպեցու աշխատությունները հենց սկզբից այդպիսին են եղել, թե՞ ներկայիս վիճակը պայմանավորված է ավելի ուշ կայացած խմբագրությամբ: Որովհետև որքան էլ կարծես փորձ է արվում չխոսել պետականության վերականգնման մասին, այնուամենայնիվ սպրդում են որոշ տվյալներ: Ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք այդ որոշ հանգամանքների վրա: Այսպես, Եղիշեն գրում է. «Քանզի իբրև ետես մեծն Վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց: Թէպէտ և ստուգեալ գիտաց զբազմաց այլոց ևս զերկմտութիւն, որ դեռ ևս ընդ նմա միաբանեալք էին, քաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զզօրսն իւր. քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն: Հրաման տուաւել ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն՝ որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր, և զիւրաքանչիւր զօրս տայր նոցա, զի դեռ ևս ինքն ունէր զամենայն աշխարհն »[29]:

Առաջին իսկ հայացքից պարզ է, որ Վարդան Մամիկոնյանն իր ձեռքում էր պահում ամբողջ երկիրը, ինչն էլ, ինչպես հետո կտեսնենք, պարզապես նրա թագավորական իշխանության արտացոլումն էր: Անշուշտ, թագավորական իշխանության համար մղվող պայքարին փորձել է մասնակցել Վասակ Սյունին, որ այդ

28 **Ղազար Փարպեցի**, դրվ. Բ., գլ. ԼԹ:
29 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Եր., 1957, էջ 99:

շրջանում Հայաստանի մարզպանն էր: Մանրամասները մեզ, բնականաբար, հայտնի չեն: Դատելով Թովմա Արծրունու տեղեկություններից` նա այդ պայքարում տանում է տալիս` ապստամբության նկատմամբ (որի ղեկավարն էր եղել սկզբնական շրջանում) որդեգրած նոր քաղաքականության հետևանքով: Հասկանալով, որ առանց բյուզանդական օգնության և հոների օժանդակության ապստամբությունն ապագա չունի, նա փորձում է լեզու գտնել պարսից արքունիքի հետ, ստանալ վերջինիս համաձայնությունը` քրիստոնեությունն ազատ դավանելու համար և աստիճանաբար ապստամբությունը տանել դեպի մարում: Ամեն ինչից դատելով, պարսից արքունիքը, շատ լավ իմանալով, թե ի՛նչ իշխանատենչ ու հայրենասեր մարդու հետ գործ ունի, համաձայնում է, որ նա դառնա վերականգնվելիք ստորակա թագավորության թագավորը: Այլ խնդիր է, անշուշտ, թե որքանով էին պարսից արքունիքի խոստումները իրական, քանի որ նրանք, ի դեմս արքայից արքայի և հազարապետ Միհրներսեհի, հիանալի գիտեին, թե ում հետ գործ ունեն: Մի բան պարզ է, որ Վասակ Սյունին, ոգևորված իրեն ստորակա թագավոր ճանաչելու վերաբերյալ պարսից արքունիքի տրված խոստումով, Տիզբոնի դատավարությանը մեկնեց որպես թագավոր:

Եղիշեն, նկարագրելով նրա հանդերձները, հետևյալն է գրում. «Եւ եղև յաւուր միոջ մեծի զամենայն երեւելի զպատուականսն հրամայէր յընթրիս կոչել: Կոչեցին և զուրացեալն. և նա ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն. կապէր և զպատուավուրսն և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկռանակուռ ծոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջս, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբքն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ` երթայր յարքունիս. շքեղ և երևելի քան զամենեսեան երևէր բազմութեանն»[30]: Փաստորեն` Վասակ Սյունին արքունիք էր ներկայանում որպես թագավոր:

Միայն միամիտ ուսումնասիրողը կարող է կարծել, որ դա նա անում էր առանց համապատասխան թույլտվություն ստանալու: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ ապստամբության մասնակից նախարարները, ճիշտ է, աքսորվեցին Միջին Ասիայի կողմերը և որոշ ժամանակ անց հայրենիք վերադարձան, սակայն մի մարդ, որին պատմիչները հակված են հավատափոխ համարելու, այդպես էլ Տիզբոնից ետ չվերադարձավ: Պարսից արքունիքն առանց ամաչելու հայտարարեց, թե այդ ի՞նչ իրավունքով է Վասակ Սյունին նման հանդերձներ ու խույր կրում և դատապարտեց նրան մահապատժի: Ավելին, երբ ծանոթանում ենք Եղիշեի աշխատությանը, ապա ուշադրություն է գրավում. «…օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն. կապէր և զպատուավուրսն և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ…»[31] արտահայտությունը, որից հասկացվում է, որ Վասակ Սյունին այդ ամենն արել է պարսից արքունիքի համաձայնությամբ: Եվ վերջապես` շատ ծիծաղելի է այն միտքը, թե նա հավատափոխ է եղել: Թերևս Վասակ Սյունին կարող է համարվել ուրացած` կապված ուխտը ուրանալու հետ, սակայն ինչպե՞ս կարող էր հավատափոխ համարվել մի մարդ, որը փորձում էր պարսից արքունիքից իր ժողովրդի համար թույլտվություն ստանալ քրիստոնեությունն ազատ դավանելու:

30 **Եղիշէ**, էջ 136:
31 Անդ :

Սակայն թե՛ Եղիշեն և թե՛ Ղազար Փարպեցին ոչինչ չեն ասում Վարդան Մամիկոնյանի թագավոր դառնալու ծրագրերի մասին, քանի որ վերջինս նրանց պետք է ընդամենը որպես նահատակ: Բայց թեկուզ տեսականորեն, դրա հնարավորությունը կա, և այդ մասին Թովմա Արծրունին հայտնում է հետևյալը. «Իսկ զթագաւորաբնակ տեղին մեծին Տրդատայ տան ի ձեռս Վահանայ Արծրունւոյ՝ շինել նմա տուն թագաւորաց, արարս պատրաստութեամբ. քանզի խորհեցան թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց, զի էր այր սրտեայ և ուժեղ, քաջախորհուրդ և իմաստնախոհի, խոնարհ, առատաձեռն և զուարթամիտ: Բայց յետոյ անմիաբան գտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ, և անցին գնացին առ մեծն Վարդան. գնաց և Վահան զհետ նախարարացն առ Վարդան յառաջագոյն, տալ նմա զվերակացութիւն Հայոց. և եղեն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ»[32]: Եթե չլիներ այս տեղեկությունը, ապա շատ վատ կարծիքի կլինեինք Վարդանանց պատերազմի մասին: Այնուամենայնիվ, դժվար չէ տեսնել, որ ապստամբության «քվինտ-էսենցիան» եղել է Հայոց թագավորությունը վերականգնելու խնդիրը:

Սկսենք այն բանից, թե որքան է ճշմարտամոտ այս տեղեկությունը, քանի որ շատերին կարող է թվալ, թե Արծրունյաց պատմիչը նման տեղեկությունը հաղորդում է՝ նպատակ ունենալով սոսկ բարձրացնել Արծրունիների տոհմը: Կարծում ենք, որ այդ տեղեկությունների մեջ Արծրունիների համար առանձնապես պարծենալու բան չկա, քանի որ, ճիշտ է, Վահան Արծրունու թագավոր հռչակվելու խնդիրը բարձրացվել է և անգամ որոշում կայացվել, սակայն այդ ամենը ավարտվել է միանգամայն բացասական արդյունքով, ինչը Արծրունիներին պարծենալու ոչ մի իրավունք չի տալիս: Ուստի աներկբայորեն պետք է ընդունել դրա՝ իրականությանը համապատասխանելը:

Իսկ ե՞րբ տեղի ունեցան այդ իրադարձությունները: Մեր կարծիքով, եթե թագավոր ընտրելու հարց եղել է, ապա խոսակցությունները գնացել են հօգուտ Վասակ Սյունու, որը շատ խելոք էր, որպեսզի այն անմիջապես կյանքի կոչեր: Համենայն դեպս, այդ հարցը լուծված չէր Վարդան Մամիկոնյանի կողմից հայկական զորքերը Խաղխաղի կողմերը տանելու օրերին: Այս խնդիրն իր ամբողջ էությամբ ծառացավ ապստամբների առաջ, երբ Վասակ Սյունին, հուսահատվելով բյուզանդական կողմի բացասական պատասխանից ու հոների պատասխան չուղարկելուց և հասկանալով, թե ինչ ծանր ժամանակներ են սպասում առանց դաշնակիցների մնացած հայ ժողովրդին, փորձեց լեզու գտնել պարսից արքունիքի հետ: Ստեղծվեց մի բարդ կացություն: Վարդան Մամիկոնյանը հիանալի հասկանում էր, որ դեպքերի խաղաղ զարգացումը որոշակիորեն տանում է դեպի Վասակ Սյունու հաղթանակը, քանի որ նա երկրի մարզպանն է և իշխանությունը կենտրոնացված է նրա ձեռքերում: Վարդան Մամիկոնյանը նույնպես հզոր, իշխանատենչ անձնավորություն էր, որը ձգտում էր թագավորության: Սակայն դրան հասնելու միակ ճանապարհը ապստամբությունը խորացնելու մեջ էր: Ուստի և նա իր ամբողջ գործունեությունը ծավալում է այդ ուղղությամբ: Իրենց հերթին՝ նախարարներն էլ առանձին ոգևորություն չէին տածում նրան թագավոր դարձնելու հարցում, քանի որ թագավորի ուժեղ մարդ լինելու դեպքում, իրենց ինքնուրույնությունը, կամա թե ակամա, լիարժեք չէր լինի ու հօդս կցնդեր:

Ուստի պետք էր ընտրել մեկին, որը, չնայած Թովմա Արծրունու մեծապատիվ

32 **Թովմա Արծրունի և Անանուն**, դպր Բ. գլ Ա:

գովեստներին, առանձնապես դեմք չի եղել: Եվ թագավորի պաշտոնի համար պայքարի առաջին փուլն ավարտվում է Վարդան Մամիկոնյանի պարտությամբ: Սակայն նախարարներն էլ միամիտ անձինք չէին և լուր ունենալով, որ պարսկական մի մեծ բանակ է շարժվում Հայաստան ապստամբությունը ճնշելու նպատակով, հասկանում են, որ Վահան Արծրունին նորանկախ պետության համար հարմար թագավոր չէ, քանի որ նա ի վիճակի չէ թագավորությունը պաշտպանելու պարսկական զորքի դեմ պատերազմական գործողությունների ժամանակ:

Ուստի Թովմա Արծրունին ձև է անում, թե իրեն հասկանալի չէ, թե ինչու՞ նախարարները անմիաբան գտնվեցին ու որոշեցին թագավոր ընտրել Վարդան Մամիկոնյանին: Իրականում ամեն ինչ լույսի պես պարզ է: Նորանկախ թագավորությունը պարսիկներից կարող էր պաշտպանել զորավար Վարդան Մամիկոնյանը: Եվ նախարարները որոշում են բեկանել իրենց նախկին որոշումը, քանի որ անգամ Վահան Արծրունուն արքունի ապարանք կառուցելու համար տեղ էին հատկացրել և ... Վարդան Մամիկոնյանին թագավոր ընտրել: Եթե սկզբում իշխաններին ձեռնտու էր Վահան Արծրունու պես թույլ անձնավորությունը, ապա ստեղծված նոր պայմաններում նա այլևս պետք չէր: Երկիրը պետք էր հանձնել **ուժեղ ձեռքի**: Այս ամենը ցույց է տալիս, որ Վարդան Մամիկոնյանը Ավարայրի դաշտ մեկնեց ոչ թե որպես սպարապետ, այլ հայոց թագավոր, որի կարգադրությամբ շատերին հարկադրաբար զինվորագրում էին և տանում ռազմի դաշտ: Նրա խնդիրը իր թագավորության պաշտպանությունն էր պարսկական զորքերից:

Հարկ է կանգ առնել Վահան Արծրունու անձնավորության վրա, որի անունը իրենց երկասիրություններում չեն հիշատակում ո՛չ Եղիշեն, ո՛չ էլ Ղազար Փարպեցին: Այն տպավորությունն է ստեղծվում անգամ, որ նման անձնավորություն գոյություն չունի: Ավարայրի ճակատամարտում Վարդան Մամիկոնյանի հետ զոհվածների մեջ հիշվում են Խորեն Խոռոխոռունին, Արտակ Պալունին, Տաճատ Գնթունին, Հմայակ Դիմաքսյանը, Ներսեհ Քաջբերունին, Վահան Գնունին, Արսեն Ընծայնոցը, Գարեգին Սրվանձտյանը 278 զինվորների հետ միասին, այսինքն՝ ընդամենը 287 մարդ[33]:

Ղազար Փարպեցին էլ է հիշում Վարդան Մամիկոնյանի հետ զոհվածներին, միայն թե ընդհանուր զոհվածների թիվը համարում է 276 մարդ[34]: Իսկ ահա Վահան Արծրունու մասին և ոչ մի հիշատակություն՝ այն դեպքում, երբ Թովմա Արծրունին գրում է. «… և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցել՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան, և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ գունդն Հայոց, ՈՂՋ ոգիք: Եւ պատմի այս ի համառօտութեան Աբրահամու Խոստովանողի»[35]: Ի՞նչ մեկնաբանություն տալ այս իրողությանը: Կարծում ենք՝ Եղիշեն ու Ղազար Փարպեցին միանգամայն գիտակցաբար են բաց թողնում Վահան Արծրունու անունը, որն առանձնապես բարձր դիրք չի ունեցել Արծրունյաց տոհմի համակարգում: Վահան Արծրունու ամենամեծ արժանիքն այն էր, որ նա ընտրվել էր թագավոր, ինչի մասին որոշակիորեն գրել չէին ուզում Եղիշեն և Ղազար Փարպեցին: Վահան Արծրունին չի էլ ունեցել առանձին զորաջոկատ, որը հնարավորություն կտար նրան հիշատակվելու: Ամենայն հավանականությամբ՝ եղել է Վարդան Մամիկոն-

33 **Տե՛ս Եղիշե,** էջ 119-120:
34 Տե՛ս **Ղազար Փարպեցի,** դպր Բ, գլ ԼԹ:
35 **Թովմա Արծրունի և Անանուն**, դպր Բ. գլ Ա:

յանի թիկնապահ ջոկատում, և պատմիչները որևէ կարիք չեն ունեցել հիշատակելու նրան: Ուստիև նա հայտնվել է սպանված 287 կամ 276 անձերի մեջ:

Ինչպես նշեցինք, Վարդան Մամիկոնյանը Ավարայրի դաշտում պարսիկների դեմ մարտնչեց արդեն որպես հայոց թագավոր: Հաղթեր նա Ավարայրի ճակատամարտում, միանգամայն այլ ձևով կդասավորվեին Հայաստանի քաղաքական պատմությունը և զարգացումները, սակայն հայկական բանակը, որ թվապես երեք անգամ զիջում էր պարսկական բանակին, պարտություն կրեց, հայոց թագավորը սպանվեց արյունահեղ ճակատամարտում և Հայաստանը, կամ, որ ավելի ճիշտ է՝ Արևելյան Հայաստանը կրկին հայտնվեց պարսկական տիրապետության ներքո:

Եվս երկու խոսք Ավարայրի ճակատամարտում զոհվածների թվի վերաբերյալ: Օգտվելով Աբրահամ Խոստովանողի համառոտությունից՝ Թովման զոհվածների թիվը ցույց է տալիս 696 և ոչ թե 287-276: Դա մի կողմից ցույց է տալիս, որ Վարդան Մամիկոնյանը և նրա հետևորդները համառ կռիվ մղեցին պարսկական զորքի դեմ: Մյուս կողմից, շատ հնարավոր է, որ սա Ավարայրի ճակատամարտում զոհվածների ընդհանուր քանակն է: Այսինքն՝ հայերի զոհվածները 1036-ով[36] նշելը ոչ թե վերաբերում է միայն Ավարայրի ճակատամարտին, այլ ողջ ապստամբությանը: Նույն կերպ էլ՝ պարսիկների 3544 զոհեր տալը չի կարող կապվել միայն Ավարայրի ճակատամարտի հետ, այլ ապստամբության ամբողջ ժամանակաշրջանի[37]:

696 սպանվածների մասին տեղեկությունը շատ արժեքավոր է նաև այն տեսակետից, որ ոչ միայն Վարդան Մամիկոնյանն էր կռվում և նահատակվում իր յուրայինների հետ՝ մեծ ջարդ կազմակերպելով պարսկական բանակում, այլև ճակատամարտի մյուս հատվածներում ևս համառ պայքար էր ծավալվում: Եվ եթե Վարդան Մամիկոնյանի հետ զոհվածների թիվը, համաձայն Եղիշեի, 287 էր, ապա ճակատամարտի մյուս հատվածներում հայերը տվել են 409 զոհ, այլ խոսքով՝ ավելի շատ, քան Վարդան Մամիկոնյանի զորաջոկատը: Եվ եթե մեր տեսակետը ճիշտ է, ու հայերը Ավարայրի ճակատամարտում տվել են 696 զոհ, ապա ապստամբության մնացած ժամանակահատվածում հայերի զոհերի թիվը կազմել է ընդամենը 340 մարդ:

Այժմ, երբ մենք այս դեպքերին նայում ենք հետադարձ հայացքով, պարզ է դառնում, որ մեծն Պատմահայրը որն առանձնապես ոգևորված չէր Մամիկոնյաններով, այնուամենայնիվ, որպես մեծ հայրենասեր, չէր կարող չգրել այդ ժողովրդաազատագրական պատերազմի մասին:

Բայց այս թվական տվյալներով հանդերձ՝ V դարի հեղինակները ոչինչ չեն հայտնում Վարդան Մամիկոնյանի թագավոր հռչակվելու մասին: Կարծում ենք, խնդիրն առավել քան պարզ է: Երբ զոհվեցին թագավոր դարձած Վարդան Մամիկոնյանը և թագավոր ընտրված, բայց չկառավարած Վահան Արծրունին, ու ապստամբությունը պարտություն կրեց, այլևս նրանք պետք չէին որպես Հայաստանի անկախության համար կռվող հերոսներ, այլ անհրաժեշտ էին հայոց եկեղեցուն՝ որպես նահատակներ հանուն հավատի: Եվ պատմությունը, եթե ոչ անմիջապես Եղիշեի ու Ղազար Փարպեցու կողմից, ապա նրանց երկասիրությունները խմբագրողների կողմից տեղափոխվեց միանգամայն այլ հարթություն: **Վարդան Մամի-**

36 Տե՛ս **Եղիշե**, էջ120: **Ղազար Փարպեցի,** դպր Բ, գլ ԼԹ:
37 Տե՛ս **Եղիշե**, էջ120: **Ղազար Փարպեցի,** դպր Բ, գլ ԼԹ:

կոնյանը պետք է դառնար հանուն հավատի պայքարի խորհրդանիշ:

Մեծն Պատմահայրը չէր կարող և չի էլ փորձել այդ տեսանկյունից արժևորել ու մատուցել 450-451 թթ. ժողովրդաազատագրական պատերազմը: Նրա համար կարևորը այդքան թանկ **Հայոց թագավորության վերականգնումն էր,** ինչը պետք է իր մանրամասներով արտացոլվեր նրա հանճարեղ երկասիրության Դ գրքում կամ դրվագում: Ավելին, նրա պես հզոր ուղեղը չէր կարող հավուր պատշաճի չգնահատել Վասակ Սյունու կատարածը և պարսից արքունիքի հրամանով բանտում մահապատժի ենթարկվելը: Սակայն դրանք իրողություններ էին, որոնք այլևս չէին հետաքրքրում Հայոց եկեղեցուն:

Ապստամբությունը պարտվեց և Պատմահայրը, անտարակույս, նկարագրելու էր երկրում ստեղծված կացությունը, թե ինչպես ապստամբությունից հետո զգուշավոր դարձած պարսիկներն այլևս խուսափում էին բռնի միջոցների դիմելուց և աշխատում էին զրադաշտականության դիրքերն ուժեղացնել երկրում՝ խրախուսելով հայ նախարարների հավատափոխությունը՝ նրանց արտոնություններ, կալվածքներ ու տիրույթներ տալու, ինչպես նաև պաշտոններ հանձնելու միջոցով: Այս ամենի մասին գրել է նաև Ղազար Փարպեցին[38]: Հիշյալ ծանր կացության մասին չէր կարող չգրել Պատմահայրը, որի սիրտն աղեկտուր էր լինում՝ տեսնելով այդ ամենը:

Եվ ահա, հայոց քաղաքական դաշտում հայտնվում է մի հանճարեղ դեմք՝ Սահակ Բագրատունին: Նա հիանալի հասկանում էր, որ հարկավոր է դրա առաջն առնել, ուստի մտածում էր երկու խնդրի մասին. ժողովրդին զենք տալ ի դեմս **Հայոց պատմության**, որպեսզի նա գիտակցի, թե ո՛վ է ինքը և ի՛նչպիսի հերոսական պատմության կրող է: Սակայն մի մարդ, որ պատրաստվում էր ապստամբություն բարձրացնել պարսկական տիրապետության դեմ, կարիք ուներ նաև **քաղաքական ծրագրի**: Թե՛ մեկը և թե՛ մյուսը իրագործելու համար Սահակ Բագրատունուն հաջողվում է գտնել ամենահարմար անձնավորությանը՝ հզոր մտքի տեր Մովսես Խորենացուն՝ դառնալով նրա հովանավորողն ու մեկենասը: Եվ Պատմահայրը կամ ապագա Պատմահայրն այդ գործին լծվեց իր ամբողջ էությամբ: Ծնվեց «Պատմութիւն Հայոց»-ը, որն ամփոփում էր հայոց պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև Զենոն կայսեր ժամանակները: Սակայն միայն սրանով չէին ավարտվում այդ հզոր ուղեղի ծառայությունները: Նա Սահակ Բագրատունու համար պատրաստեց Մեծ Հայքի թագավորության նկարագրությունը, որն արդեն քաղաքական ծրագիր էր, թե ապստամբները հաջողությունից հետո ի՛նչ սահմաններով են վերականգնելու այն: Հետո արդեն, երբ ապստամբությունն ավարտվել էր հայ-պարսկական համաձայնությամբ՝ Նվարսակ գյուղում, Մովսես Խորենացին Պապոս Աղեքսանդրացու «Երկրագրության» և այլ նյութերի համաձայն պատրաստեց հայ աշխարհագրական մտքի այդ նշանավոր կոթողը՝ «Աշխարհացոյց»-ը, որը դարեր շարունակ ծառայեց որպես դասագիրք հայ աշակերտության համար:

Անշուշտ, փաստեր չկան, բայց դժվար չէ ենթադրել, թե ինչ անձկությամբ էր սպասում այդ ապստամբությանն ինքը՝ Մովսես Խորենացին: Երկիրն ապստամբել էր իր սրտին մոտ Բագրատունիների տոհմի ներկայացուցչի ղեկավարությամբ: Սահակ Բագրատունին մտածում էր, թե ինչպես հայերն ու վրացիները միավորեն իրենց ուժերը ազատագրական ապստամբության ժամանակ: Պարսիկներն

38 Տե՛ս **Ղազար Փարպեցի**, դպր Գ, գլ. ԾԹ-ԿԵ:

էլ իրենց հերթին որոշում են վրաց Վախթանգ Գորգասար թագավորի ապստամբությունը ճնշել հայկական զինված ուժերով: Սակայն փոխանակ վրաց ապստամբությունը ճնշելու՝ հայերը հիշում են, որ իրենք էլ պարսից տիրապետության տակ են և որոշում են իրենք էլ ապստամբել պարսկական տիրապետության դեմ: Շիրակում նրանք ընտրում են կառավարություն, որտեղ իբր մարզպան է ընտրվում, ըստ Ղազար Փարպեցու, Սահակ Բագրատունին, իսկ սպարապետ Վահան Մամիկոնյանը, որը մինչև այդ՝ տեղի տալով պարսկական բռնաճնշումներին, ընդունել էր զրադաշտականություն[39]:

Հետաքրքիր է կառավարության ընտրության խնդիրը: Եթե հավատանք Ղազար Փարպեցուն, ապա հենց սկզբից ապստամբության ղեկավարը եղել է Վահան Մամիկոնյանը: Ճիշտ է, նա սկզբում խորհուրդ է տալիս հայ նախարարներին հեռու վանել իրենցից ապստամբելու մտքերը և որ նրանք իրենց դատարկ ու անպիտան խորհուրդներով իրեն նեղություն չտան[40]: Հետևում է մի անհեթեթ շարունակություն, թե՝ Սահակ Բագրատունուն հայտնում են, որ հայերն ու զորավար Վահանը նրան երկրի մարզպան են կարգել[41]: Սա արդեն, կամենում ենք, թե ոչ, հետին թվով կեղծիք է: Եթե ապստամբության կազմակերպիչը Վահանն էր, ապա նա հազիվ թե իր առաջին դեմքի իրավունքը հանձներ Սահակ Բագրատունուն: Հատկապես կարևոր է այն իրողությունը, թե ինչու, ապստամբելով պարսկական տիրապետության դեմ, հայերը ընտրում են մի կառավարություն, որի գլուխ կանգնելու էր մարզպան ընտրված Սահակ Բագրատունին: Եթե մենք մի փոքր ավելի խորը նայենք հիշյալ իրադարձություններին, ապա պարզ կդառնա, որ Սահակ Բագրատունուն մարզպան ընտրելը իրականում սքողում էր հայերի զուտ հակապարսկական ապստամբությունը նրանով, որ պայքարում են պարզապես իրենց իրավունքների համար:

Իսկ հետագայում Նվարսակի հաշտությունից հետո, շատ բան էր փոխվել, և հայ նախարարները կամենում էին բոլորովին այլ լույսով մատուցել ապստամբության նախադրյալներն ու բնույթը: Մինչդեռ, մեր կարծիքով, դեպքերը զարգացել են մի փոքր այլ կերպ: Ապստամբության ոգին եղել է Սահակ Բագրատունին, որին հաջողվել է իր կողմը գրավել մազդեզականությունն ընդունած Վահան Մամիկոնյանին և մյուս հայ նախարարներին: Հետևաբար՝ մարզպանի ընտրության մասին խոսելն ավելորդ էր, քանի որ ապստամբության առաջնորդը բնավ էլ նպատակ չուներ մարզպան դառնալու, այլ կամենում էր կյանքի կոչել հայոց պետականությունը վերականգնելու իր ծրագիրը: Ապստամբությունը հակապարսկական էր, հետևաբար առաջնորդը ընտրվել է ոչ թե մարզպան, այլ թագավոր, հանգամանք, որ, անկասկած, Մովսես Խորենացու երազանքն էր: Այդ իրադրության պայմաններում մտածել այլ լուծման մասին, պարզապես անտրամաբանական էր: Այլ խոսքով, Սահակ Բագրատունին Ակռռիի, Ներսեհապատի և Ճարմանայնու կռիվներում հանդես էր գալիս որպես թագավոր:

Դժբախտաբար, Ճարմանայնու կռիվը վերջինը եղավ Սահակ Բագրատունու կենսագրության մեջ, որն ընկավ այդ արյունահեղ ճակատամարտում հերոսի մահով[42]: Իրերի բերումով ապստամբության ղեկն իր ձեռքը վերցրեց Վահան Մամիկոնյանը, որը, սակայն, երկարատև կռիվներից հետո որոշեց ընդունել պարսից

39 Անդ, դրվ. Գ, գլ ԿԵ:
40 Անդ, դրվ. Գ., գլ ԿԶ:
41 Անդ, դրվ. Գ., գլ ԿԶ:
42 Անդ, դրվ. Գ, գլ ՀԴ:

արքունիքի առաջարկը, և Նվարսակում ի վերջո հաշտություն կայացավ պարսիկների հետ[43]: Նա շուտով դարձավ տանուտեր՝ հիմք դնելով հայոց տանուտիրությանը[44]:

Նման պայմաններում հայոց նախարարներին այլևս ձեռնտու չէր ապստամբությունը ներկայացնել որպես պարսկական տիրապետության դեմ բռնկված զինված պայքար, այլ պայքար՝ հայ նախարարների իրավունքների վերականգնման համար, մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը:

Հասկանալի է, որ Սահակ Բագրատունու հովանավորյալն այդպես չէր ներկայացրել և չէր էլ կարող ներկայացնել 481/482-484 թթ. ապստամբությունը: Պատմահոր համար այլևս անիմաստ էր շարունակել Հայոց պատմությունը, երբ փորձ էր արվել վերականգնելու հայոց թագավորությունը, սակայն Սահակ Բագրատունու զոհվելուց հետո հայ նախարարությունը հրաժարվել էր այդ գաղափարից և բավարարվել իր իրավունքների պաշտպանությունն արձանագրող հայ-պարսկական համաձայնությամբ, որը ձեռք էր բերվել Նվարսակի հաշտությամբ:

Մովսես Խորենացին այլևս անելիք չուներ: Իր սիրեցյալ հերոսը սպանված է, Հայոց թագավորության վերականգնման գաղափարը՝ տապալված և իշխանությունն անցել էր իր կողմից չսիրված Մամիկոնյանների ձեռքը՝ ի դեմս Վահան Մամիկոնյանի: Պատմահոր կարծիքով, դա այլևս Հայոց մեծերի պատմություն չէր, այլ հայոց հայրենիքի ավարտաբանությունը և այդպես էլ խորագրեց իր երկասիրության Դ գիրքը. «**Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց**»: Մովսես Խորենացին ապրեց բավական երկար և, ինչպես նշել ենք, կենդանի էր VI դարի սկզբներին: Սակայն նա իր «Պատմութիւն Հայոց»-ի չորրորդ գիրքը ավարտել էր Զենոն կայսեր իշխանության ժամանակներով՝ չանդրադառնալով Նվարսակի հաշտությանը հաջորդած դեպքերին:

Այնքան մեծ էր Պատմահոր հմայքը, որ նրա երկասիրությունը դարձավ մանուկների համար դասագիրք, մեծահասակների համար՝ հզոր զենք օտար տիրապետությունների դեմ մղվող պայքարում: Հասկանալի է, որ այն օգտագործվել է Թովմա Արծրունու և ուրիշների կողմից: Արծրունյաց պատմիչը եղել է հազվագյուտ անձերից մեկը, որը կարդացել է այն: **Սակայն, ինչպես վերը նշեցինք, Հայոց եկեղեցուն պետք չէին պարսկա-բյուզանդական և ապա՝ արաբա-բյուզանդական տիրապետության պայմաններում պետականության համար պայքարող հերոսներ, այլ նահատակների խորհրդանիշներ, ուստիև եկեղեցու հայրերի կարգադրությամբ Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի չորրորդ գիրքն այլևս չարտագրվեց և կորավ Հայոց պատմության համար:**

Չորրորդ գիրքը չկա, բայց դրա մասին, կամենում ենք, թե ոչ, հիշատակություն կա, որը չէր կարող հայագետների ուշադրությանը չարժանանալ: Շատ հնարավոր է, որ Պատմահոր «Պատմութիւն Հայոց»-ի չորրորդ գրքի արտագրելու արգելքը դրվել է սկզբում միայն 481/482-484 թթ. ապստամբության վրա: Թերևս դրանով պետք է բացատրել Սամվել Անեցու այն տեղեկությունը, թե Պատմահոր տեղեկություններն ավարտվում են Հազկերտ Բ-ի ժամանակներով, այլ խոսքով՝ չորրորդ գրքի երկրորդ կեսը կամ գուցե՝ ավելին, այլևս կորած էր պատմության համար: **Սակայն արգելք է դրվել նաև չորրորդ գրքի առաջին մասի վրա: Եվ ի՞նչ**

43 Անդ, դրվ. Գ, գլ ԴԴ:
44 Անդ, դրվ. Գ, գլ ԴԹ:

տեղի ունեցավ: Խմբագիրները չորրորդ գրքի «Ավարտաբանութիւն մերոց հայրենեաց»-ը տեղափոխեցին Գ գրքի վրա, որի իսկական խորագիրը՝ «Ավարտումն Հայոց մեծաց»-ը վերածվեց Գ գրքի Ա գլխի:

Որպես վերջաբան նշենք, որ,ամենայն հավանականությամբ, «Ողբ»-ը գրվել է Դ գրքի վերջում: Այն իրոք «Ողբ» էր Հայոց մեծերից զրկված Հայաստանի համար, որը, հայտնվելով Գ գրքի վերջում, պարզապես ավարտուն տեսք հաղորդեց «Պատմութիւն Հայոց»-ին:

Կգտնվի՞ Պատմահոր երկասիրության Դ գիրքը, թե՞ ոչ, հնարավոր չէ միանշանակ պատասխանել: Վախենանք, որ այն ընդմիշտ կորած է մեզ համար, բայց նաև չի բացառվում, որ հայկական ձեռագրերից ինչ-որ մեկում պահպանվում է: Ուստի մնում է լոկ մեր երախտիքի խոսքն ուղղել Արծրունյաց պատմիչի հասցեին, որը ոչ միայն կարդացել է այն, այլև նպատակահարմար է գտել հիշելու այդ մասին իր Արծրունյաց տոհմի պատմությանը նվիրված աշխատության մեջ:

Summery

THE “HISTORY OF ARMENIA” BY MOVSES KHORENATSI HAS HAD THE “FOURTH BOOK”

Babken H.Harutyunyan

The great historiographer Movses Khorenatsi (Moses of Chorene) became immortal handing down to the verdict of posterity his unique “History of Armenia”, which is known with its three books according to the manuscripts and ends with the author’s “Lament”.

Though judging by some announcements of Tovma Artsruni, it can be supposed that Movses Khorenatsi’s “History of Armenia” has had the Fourth book, which not only Tovma Artsruni was acquainted with but also some medieval authors.

The historians of blessed memory such as Ghevond Alishan, H. Karenyan, M. Emin, Khoren Stepane, G. Ter-Mkrtchyan, B. Gevorgyan (Tscughuryan) of Vagharshapat, St. Malkhasyants, Hrant Armen, N. Poghosyan, V. Vardanyan, Artashes Matevosyan and others also referred to the question of Movses Khorenatsi’s Fourth book, and one part of them accepts its existence while the others deny it strictly assuming that it had rather a character of enclosures, the latter idea was assiduously substantiated especially by Artashes Matevosyan.

An attempt to show up the existence of Movses Khorenatsi’s Fourth book is made in this article, basing on the affirmations of Tovma Artsruni and others, and logical thought.

To our opinion the title of Khorenatsi’s Third (C) book – “Conclusion of our Fatherland” was in truth the title of the Fourth (D) book, and the Third book’s First Chapter’s (A) heading – “The ending of the History of great personalities of Armenia”[45] was really the Third book’s title.

45 The translation is made according to St. Malkhasyants.

According to Tovma Artsruni, the eminent Father of history of Armenia wrote his work till Emperor Zeno's time, consequently the Fourth (D) book of "History of Armenia" was not a collection of enclosures, but presented the history of the V century's liberation wars in completely different viewpoint. We consider that it is more than real that Vahan Artsruni was elected as king in the beginning of the War of Vartanantz, then this idea was rejected and Vardan Mamikonian was proclaimed as king. In other words, Vardan Mamikonyan was fighting against Persian army in the Battle of Avarayr as the king of Armenia, defending his kingdom's independence.

Movses Khorenatsi could not remain silent about the revolt of 481/482-484 led by his maecenas Sahak Bagratuni. To our strong opinion, in the beginning of the revolt Sahak Bagratuni was elected not as Marzban, but as king of Armenia, but after his killing in the battle of Charmanay and when The Nvarsak Treaty was signed between Armenian nakharars and the Persian court, the above-mentioned revolt was presented as fight for the defense of Armenian nakharars' rights, and as if Sahak Bagratuni was elected just as marzban i. e. Persian official.

After the wars of Vardanantz and Vahanantz, the Armenian Church didn't need heroes fighting for the independence of Armenia, but symbols of nakharars fallen for faith. Therefore, judging by a notification of Samvel Anetsi, first of all the Second (B) part of the Fourth (D) book was forbidden to copy, later the First (A) part of the book was also suppressed. The work of the great historiographer, whose Forth (D) book ends with the "Lament", was edited and the latter was moved to the Third (C) book's end, imparting some completeness to the version that has reached to our days.

It's hard to assume if the Fourth (D) book of Movses Khorenatsi's "History of Armenia" will ever be found, but it is worth to hand it to Tovma Artsruni, thanks to whom we know that the Fourth (D) book was laid down till Emperor Zeno's time (474-491).